

Մարտի 25-ին Մանկավարժական համալսարանում կանցկացվի «Հասարակագիտություն առարկայի դասավանդման խնդիրները բուհում և դպրոցում» խորագրով հանրապետական գիտաժողով: Այն կազմակերպում են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետն ու ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն- ՍԻՎԻՏԱՍ, ՀԿ-ն:

Նպատակը`

- Քննարկել հասարակագիտություն առարկայի դասավանդման խնդիրները
- Առաջարկել դասավանդման ավելի արդյունավետ մեթոդներ
- Ջարգացնել համագործակցությունը հասարակագիտության առարկայով հետաքրքրված կառույցների, գիտնականների, ուսուցիչների միջև

Ջեկուցողների հոդվածները տպագրվելու են առանձին ժողովածուի տեսքով

- Հոդվածը պետք է ունենա A4 (210x297) չափի տպագիր մինչև 15 էջ ծավալ, վերևից, ներքևից, աջից և ձախից` 20 մմ:
- Տառատեսակը` հայերենը` GHEA Grapalat, ռուսերենը և անգլերենը` Times New Roman, տառաչափը` 12, միջտողային հեռավորությունը` 1.5, տողերի հավասարեցումը` աջ և ձախ կողմերին` առանց տողադարձի:
- Հոդվածի վերնագիրը գրել գլխատառերով, վերնագրից հետո` հոդվածի հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, բանալի բառերը` 10 բառից ոչ ավելի, որից հետո հոդվածի բովանդակությունը:
- Բոլոր ծանոթագրություններն ու հղումները պետք է տրվեն տողատակում, յուրաքանչյուր էջից կատարելով հղման նոր համարակալում:
- Հոդվածը պետք է ունենա հայերեն, ռուսերեն, անգլերեն ամփոփումներ:
- Յուրաքանչյուր հոդվածի վերջում հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով պետք է ներկայացված լինի հեղինակի մասին տեղեկատվություն` գիտական կոչում, աստիճան, պաշտոն, կազմակերպություն, գիտական հետաքրքրությունների շրջանակ, էլեկտրոնային հասցե:

Հոդվածներն ընդունվում են մինչև 06 մարտի, 2016 թ.:
Հոդվածներն ուղարկել dhre.center@civitasarmenia.am էլեկտրոնային հասցեին: